

ՄՇԱԿ

Տարեկան գինը 10 ռուբլի, կես տարվան 6 ռուբլի:
Առանձին համարները 5 կոպեկով:

Թիֆլիսում գրվում են միմյանի խմբագրատան մէջ:

Մեր հասցեն. Тифлисть, Редакция „Мшакъ“.
Կամ Tiflis, Rédaction „Mschak“.
Տէլէֆոն № 253.

Խմբագրութիւնը բաց է առաւօտեան 10—2 ժամ
(բացի կիրակի և տօն օրերէն):

Ցայտարարութիւնը ընդունուած է ամեն լեզուով:

Ցայտարարութիւնները համար վճարում են
իւրաքանչիւր բառին 2 կոպեկ:
Տէլէֆոն № 253.

ՀԻՄՆԱԳԻՐ ԳՐԻԳՈՐ ԱՐԾՐՈՒՆԻ

«ՄՇԱԿ» ԽՄԲԱԳՐՈՒԹԻՒՆԸ յայտարարում է ի գիտութիւն հայոց հասարակութեան, որ կիրակի օր, մայիսի 31-ին, Վանքի մայր-եկեղեցւում, հանդուցեալ գրող

ԽԱՉԱՏՈՒՐ ԱՐՈՎԵԱՆԻ

մահւան 50-ամեակի առիթով՝ կատարվելու է հոգեհանգիստ: Պատարագը կը սկսվի առաւօտեան 10½ ժամին, իսկ հոգեհանգիստը 12 ժամին:

Հոգեւորական դասին առանձին հրաւեր չի ուղարկվելու, այնպէս որ ցանկացողները ինքնակամ կարող են մասնակցել լինել հոգեհանգիստի կարգին՝ ի պատիւ հանդուցեալի: Պատարագին երգելու են Ներսիսեան դպրոցի երգչերի խումբը և Կայսերական թատրոնի երգիչ Բ. Ամիրջանեան:

3—3

Նիկողայոս Ստեփանեան վարդապետաց, իր Գեորգ և Ալեք-սան դր որդիներնցով, Գալի և Յովհաննէս Մարտիրոսեանցն եր սրտի ցաւով յայտնելով, առաջինը իր անմոռանալի կնոջ, երկրորդները իրանց մօր և վերջինը իր զոքանչի՝

ՆԱՏԱՆԻՍ ԻՍԱԿԱՆՎԱՆՆՎԱՐԳԱՆԻՍԵԱՆՑԻ

մահը, խնդրում են բարեկամներին և ծանօթներին հնորէ բերել յուզարկաւորութեանը, որ լինելու է մայիսի 31-ին, կիրակի օր, առաւօտեան 10 ժամին Նիսիսկեան փողոց, № 38, տուն Փարսադանեանի, դէպի Կուկիայի Նորաշէն ու Աստուածածնի եկեղեցին, և այնտեղից դէպի Խօջիվանք: Հոգեհանգիստը կը կատարվի չարաթ օր, երեկոյեան 7 ժամին:

1—1

Ներսիսեան դպրոցի նախկին աշակերտ, հանդուցեալ

ՅՈՎՀԱՆՆԵՍ ՊԱՊՈՎԵԱՆԻ

ընկերները խնդրում են հանդուցեալի ազգականներին և ծանօթներին ներկայ գտնվել հոգեհանգիստին, որ պէտք է կատարվի կիրակի, մայիսի 31-ին, առաւօտեան ժամը 11-ին, Թանդուքեան եկեղեցւում:

1—1

ԲՈՎԱՆԳԱՎՈՒԹԻՒՆ

Ցանկալի խաղաղութիւնը. Միւստորութեան փոփոխութիւնը Պարսկաստանում. — Ներքին ՏԵՍՈՒԹԻՒՆ. Խաչատուր Աբովեան. Անկեղծ ժողովրդասէրը. «Խաչատուր Աբովեանի երկերը». Ընթերցանութեան պահանջը գիւղերում. Նամակ Արաքսաբերդի. Նամակ Խմբագրութեան. Ներքին լուրեր. — ԱՐՏԱՔԻՆ ՏԵՍՈՒԹԻՒՆ. Նա-

ԲԱՆԱՍԻՐԱԿԱՆ

ԱՐՈՎԵԱՆ

I

Մեր աղքատիկ տնակում երկու հատ իրեր կային, որոնց մէջը, երեխաներս, ձեռք տալ չէինք համարձակվում: Երկու հատ գրքեր էին՝ դրանք, ցերեկները խցկված պատի մէջ պահաւորանք մի նեղուկի ու մտքի անկիւնի մէջ: Մենք դիտելիք, որ դրանցից մէկը մէջ դրած էր մեր հօր ակնոցը:

Շատ էին լինում այնպիսի երեկոները, երբ մենք միմեանց խօսք էինք տալիս չը քնել: Դա այն ժամանակն էր տեղի ունենում, երբ հայրս դէն էր քաշում ձէլի ճրագը և ծոցից հանում էր եկեղեցւոյ բարակ մօմը: Նշանակում էր, որ նա պիտի կարդայ:

Երկու գրքերն էլ ծանօթ էին մեզ: Երբ դուրս էր հանվում հին, սևակալմ և հաստ գիրքը՝ մենք շնչովում էինք՝ «Ժամագիրք» և մեր ուշադրութիւնը կենտրոնացնում էինք բարակ մօմի վրա. սպասում էինք թէ երբ կը վերջանայ ընթերցանութիւնը և մեր հայրը մեզ կը տայ մօմի մնացորդը: Զեռք մէջ բռնել փոքրիկ ու սիրուն ճրագը, որի մօտ մեր հին ձիւնածրագը մի սև խանձող էր երևում՝ դա մեզ համար երջանկութիւն էր:

Բայց երբ ժամագիրքը մնում էր իր տեղը և փոքրիկ ճրագի առաջ բացվում էր միւս գիրքը, որ նոյնպէս դեղած ու քրքրված էր, բայց աւելի բարակ, լայն ու երկար՝ այն ժամանակ մենք մոռանում էինք մօմը և խորին ուշադրութեամբ դիտում էինք մեր հօր դէմքը: Մենք

մակ Շվեյցարիայից. Նամակ Բոլշարիայից. Նամակ Պարսկաստանից. Արտաքին լուրեր. — ՀՆՈՒՍ-ԳԻՐՆԵՐ. — ՅԱՅՏԱՐԱՐՈՒԹԻՒՆՆԵՐ. — ԲԱՆԱՍԻՐԱԿԱՆ. Արովեան:

ՑԱՆԿԱԼԻ ԽԱՎԱՐՈՒԹԻՒՆԸ

Քանի մի տատանումներին յետոյ՝ պա-

մեր նշաններն ունեինք: Երբ մօմի փոքրիկ բոցը սկսում էր սաստիկ դողալ՝ մենք գիտէինք որ ժամանակն է: Եւ իրաւ, մեր հայրը յանկարծ թիկ վերցնում էր թերթով կապակալած ակնոցը, գցում էր գրքի վրա, իսկ նրա աչքերում պարզվում էր արտառուցքը: Նա ոչ ոքին չէր նայում, և երբեմն այնքան սաստիկ էր լինում յուզմունքը, որ նա բռնուցքով էր սրբում իր թաց աչքերը: Մենք գիտէինք, որ այդպէս աւանդ է Աղասու պատմութիւնը...

Տարիներին յետոյ դեղած գիրքը, որի իւրաքանչիւր էջի վրա մօմի անթիւ կաթիլներ էին մնացել՝ անցաւ իմ ձեռքը: Հայրս Աղասու ժամանակակից սերունդն էր և լաց էր լինում Աբովեանի հետ: Եւ երկրորդ սերունդն էի և ազգահոգեւոր կանգնում էի իմ հայրերի վշտի և ուրախութեան, լացի և միջնորդութեան պատմութիւնը: Որքան սրտառու էր նա: Եւ հիացած կանգ էի առնում և նորից և նորից կարդում էի Աբովեանի այս խօսքերը. «Միտք արի, միտք արի, մէկ օր էլ ատեցի ինձ ու ինձ. արի քո քերականութիւն, ճարտասանութիւն, տրամաբանութիւն ծալի, դրադ դիր ու մէկ աչքդ էլ դու դնու, ինչ կըլի, կըլի»:

II

Աբովեանը, ճիշդ որ, աչքդ էր: Մեր ժողովուրդը երբ ուզում է արտայայտել մէկի տաք, վառված սիրահարութիւնը՝ ասում է՝ «Նա աչքդ է դառնում»: Սովորական, առօրեայ բան չէ աչքը դառնալը: Աչքը լինում «տուով» է. մեր ժողովուրդը գիտէ, որ առանց երկնային կայծի, առանց վերելից տուած տաղանդի ոչ ոք չէ կարող լաւ, յափշտակող պատմել լինել: Եթէ ձեզ պատահէ լ տեսնել իսկական աչքներին, հին տիպի աչքներին, նրանց, որոնք իրանց ձիւքը ստացել են վերելից՝ դուք անշուշտ զար-

տերաւմի բախտը նորից փոխվեց. — ամերիկական գէներ, մայիսի 26-ին, Սամայսոնի և Նէլիի առաջնորդութեամբ, ցնցող հարուած տուեց սպանիական ծովային ոյժերին, և երեւի հեռու չէ այն օրը, երբ հեռագիրը լուր կը բերէ, թէ Միացեալ-Նահանգները ահազին բանակը ոտք դրած Կուբայի վրա՝ կանգնած է ճակատ առ ճակատ սպանիական զօրքի դիմաց...

Եւ որքան այդ օրը շուտ հասնի, որքան արագ կատարվեն պատերազմի վճռական ընդհարումները — այնքան լաւ, ոչ միայն Միացեալ-Նահանգների համար, որ իր դրօշակի վրա արձանագրել է «Կուբայի պատմութեան» վեհ նպատակը, այլ և ստորուկ կղզու այժմեան յանցաւոր տիրոջ համար, որը մեծ վտանգի է ենթարկում իր անտեսական և նոյն իսկ քաղաքական վիճակը՝ ստիպված լինելով խառնվել մի անհաւասար կռիւ մէջ...

Սակայն միայն այդ չէ, որ թելադրում է ցանկալ պատերազմի արագ վախճանը, այլ և այն ծանր, երկու քաղաքակրթ շաղկերի համար վիրաւորական և արեան հոտ բուրդ փաստերը, որոնք տեղի են ունենում Կուբայի շուրջը, Ֆիլիպպինեան կղզիներում և այն բոլոր կէտերում, ուր սպանիացին հանդիպում է եսնիկին: Դժբախտութեան վերջ տալու համար դժբախտութիւններ ստեղծել, արեան առաջն առնելու համար՝ արեան գետեր կազմել, — դա գուցէ անխուսափելի է քաղաքական ներկայ հանգամանքներում: Բայց յամենայն դէպս՝ խաղաղութեան բոլոր զաւարթութեան տեսակէտից վերին աստիճանի անցանկալի է նոյն իսկ քննադատը... Մենք կատարեալապէս համակրում ենք նախագահ Մակ-Կինլէյին և նրա համախոհներին, որոնք Ամերիկայի անուան համար, իբրեւ համաժողովրդային խաղաղութեան և կողմնակից երկրի համար՝ անպատիւ դործ էին համարում պատերազմը, զէնքը, արիւնը, և այդ պատճառով ամեն ձիւք թափեցին, որ կռիւ չը լինի, և այժմ էլ ոչինչ ջանք չեն խնայում, որպէս զի անխուսա-

փելի կռիւ մէջ քիչ մարդիկ զոհվեն, մարդկային քիչ արիւն թափվի:

Հեռագիրը անդադար լուր է բերում, որ Ֆիլիպպինեան կղզիներում դեղնամորթ ապստամբները, յանուն իրանց ազատութեան, մորթում են խաղաղ եւրօպայիներին, ինկվիզիցիական տանջանքների ենթարկում քահանաներին, կանանց և կամ սպանիական վարչութեան ներկայացուցիչներին, և միևնոյն ժամանակ ռազմա-միտք են ստանում ծովագետ Ռէվելից: Դա մի փաստ է, որ մեղանշում է Ամերիկայի ազատարար անուան դէմ և արատի դրոշմը դնում այն քաղաքակրթ ազգերի վրա, որոնք գնացել են հեռու արևելք՝ տեղական վարիներին կրթելու նպատակով... Եւ այդ բոլորը լոկ այն պատճառով, որ պատերազմ է յայտարարված, պատերազմ, որի ժամանակ, ինչպէս յայտնի է բոլորովին անտես են առնվում մարդասիրական զգացմունքները, և թաղաւորում է միայն մի զգացմունք, հակառակորդին ոչնչացնելու զգացմունքը...

Եւ ոչ ոք չէ կարող երաշխաւորել, որ այդ արիւնոտ, վայրենի, անբարոյականացնող փաստերը չեն տանապատկովի եթէ կռիւը շատ երկար տևէ, և երկու թշնամիների կռիւ բախտը տատանվող լինի, ինչպէս մինչև այժմ: Ահա թէ ինչու անպայման ցանկալի է, որ շուտով վայր դրվի զէնքը, շուտով լռէ թնդանթների որոտը: Եւ այդ ոչ միայն յանուն Կուբայի ազատութեան, այլ գլխաւորապէս յանուն միջազգային խաղաղութեան ընդհանուր դործի, որը ամեն անգամ, երբ պատերազմ է ծագում՝ քիչ է մնում վերջնականապէս խեղդվի արեան գետերի և վառօդի ծուխի մէջ...

ՄԻՆԻՍՏՐՈՒԹԵԱՆ ՓՈՓՈԽՈՒԹԻՒՆԸ ՊԱՐՍԱՆՏՈՒՄ

Թէհրանում տեղի ունեցած միւստարական փոփոխութիւնը — Եմինը-Իօվլէի պաշտօնականութիւնը և Մուշիր-Իօվլէի սա-

III

Տեսէք նրա «առիւծ» Աղասուն:

Ուր որ գնում է աչքը, ուր որ նրա միտքը թռիչքներ է դործում, խաղաղութիւններ է աւանդում, որոնք է մի բան, բարեբաղում է կատարութիւնից, յուսահատում է, ոյժ է ստանում, զգում է թէ հաւատում, անխնայ է թէ օրհնում, ամեն տեղ, բոլոր և մերկաների մէջ, կապույտ երկնքի և յուսատու ծիածանի տակ՝ նա միայն այս նույն անձնաւորութիւն է տեսնում, պոչոյտ է գալիս նրա շուրջը, ձուլվում է նրա հետ, իր կողքը, իր պաշտամունքն է դարձնում նրան: Եւ արհեստական, չինձու բան չը կայ այդ բոլորի մէջ: Երբ հերոսը կախարդում է տաղանդին՝ անհնարին է որ կայծոր, ջերմութիւն, տնկայային ջրածրութիւններ չառաջանան: Բոլոր խոշոր տաղանդները այդպէս են ծննդաբերել իրանց երկերը. այդ պրօցէսը մենք կարող ենք նկատել ամեն մի ջինջ, երկնային ոգևորութեան մէջ, որից դուրս են եկել ոչ միայն խաչատուր Աբովեանի համեմատաբար համեմատ «Վէրք ճայաստանին», այլ և այնպիսի աշխարհահռչակ հրաշքներ, ինչպէս Հոմերոս, Շահնամէ և այլն:

Աղասին դիմելով Աբովեանին: Մտնեք այդ կախարդանքի էութեան մէջ: Ինչ է նա պատկերացնում: Քանաքեռից երկրապարտ լինելու լուր ինքեան մի շատ խոշոր հերոս չէ, մի Սպարտակ չէ, ոչ էլ մի Ժամնա ԳԱՐԻ Սովորական, խաղաղ կեանքում նա ամենաշատը կը լինէր մի քաջ, «իգիթ» երկրապարտ, որ լաւ ձի էր, զէնք գործածել գիտէ: Բայց ինչպէս նա հերոսացաւ: — Պարսկական բռնութեան դէմ մարմնացած բողոք դառնալով: Նա չէր կարող իր սեփական ոյժերով ոչնչացնել այդ բռնութիւնը, և դա չէր էլ պահանջվում նրանից: Բաւական է

րոնց մինչև վերջակետը կարգաւ մարդու շունչ է կտրուած: Բայց այդ ոչինչ, եթէ վերջը կարգաշարժից բան կարելի լինի հասկանալ: Բերեմք մի բանի օրինակներ:

«Վերջին» իբրեւ մի ինքնատիւ անձնագործ արձանի պատմանդանին հարկ ներքի չափով տողելի նակիրձ յիշատակութիւն՝ փաստերի սղարակման մի ցանկ է միայն պարտականութիւն, այն էլ աւելի թուելով, մասնաւոր չափով մինչև այժմ գրականութեան մէջ խառնուրդ մը մարդու վերաբերութեամբ շատ քիչ, հատուկապէս տեղեկութիւնները, քան վերջիններից բաւարար չափով հաստատանք մէջ բերելով (երես 8):—«Այս իրողութեան պատճառն, անշուշտ, ամենից առաջ խառնուրդ մը մարդու անբեր, անարատ հոգու, երկնայականի չափ պարզ ընտանութեան, վերջին աստիճանի զգայուն, զրկիժ կանայի ընթացքն ու դիտողականութեան և դոյզան հետ էլ չափազանց բարձրաթիւն հերոսական հայրենասիրութեան, հաստատուն կամքի, եռանդի, աշխատասիրութեան, ի գէտ, նաև իր արտաքին գեղեցկութեան,—կարծէ՛ր նրա հատկութիւնը բաւարարական, ժառանգ և մարմնաւոր բարեմասնութեանց մէջ պէտք է որոնել (եր. 22):—«Ժառանգութեան վրէժ մարդկանց, այս, կոթող են կանգնեցնում. սակայն եթէ կոթողի նշանակութիւնը դէպք բարձր ու գեղեցիկը զրգելն է, եթէ կոթողը մեծ մարդկանց գաղափարների յաւերժական մարմնացումն է, եթէ նրա կէտ նպատակն» օրինակելի մարդկանց մասին յետոյ էլ՝ նոցա նմանելու բարձր նախնիներ կենդանի մնացածները մէջ չարմեն է, ապա այն որ բարեղէն, արդիւնայ կամ սովի արձանն է, Գիտելի բուրգից բռնած մինչև սորա, նորա առանձնատեսակը պարզապէս անկրկն, որ կարողանայ համեմատուիլ այն անձնագործ անեղծելի արձանի հետ, որ գաղափարացած անձի ոչ թէ մարմնի, այլ հոգին է բերում տեսութեան առաջ, այն կենդանի արձանի, որ ոչ թէ անբարբառ, աշտանակված է ըստ հանգիստ, այլ ամենայն մասամբ սրտով հետ նոյն լեզուով է խոսում, որով ինքը կոթողի տէրն ու միանգամայն և հեղինակն էր մի օր խօսում ու—«՛՛—ունկընդորով խնդրում» (եր. 44):

Սա ինչ լեզու է, Տէր Աստուած: Ակննջդ կանչի, անմոռանալի Արուսեան, որ դեռ կէտ դար առաջ, երբ հայ աշխարհիկ լեզուն նոր էր խանձարուրից դուրս գալիս, երբ հին եզրոց լեզուն դեռ փառաբանում, միակ դրամատիկայի լեզուն էր համարվում իր միջուկից պաշտպանների կողմից,—դու դառնացած սրտով ու կծու հեղինակութեամբ բացադանում էիր. «՛՛ էն ա էս ի ուրբ, իրթին շարադրել գիտի, որ սատանէն էլ միջիցը մէկ բառ էլ կարող իմանալ, հասկանալ... Արդեօք մտքովդ կանչեցիր, որ ասած խօսքերիցդ ամբողջ կէտ դար անցած, ըստ սիրելի ժողովրդի մեջակիցուց, առաջարկելուց ու կատարելագործվելուց յետոյ, այսօր քո կենսաբեր ու գործերի մասին գործը հենց այն «խորը, խրթին շարադրութիւններից մէկը կը լինի, որի շարադրածից բան չի կարելի «էմանալ, հասկանալ: Ժողովրդական պարզ, անպաճոյճ և կենդանի լեզուի սիրահար Արուսեանի կենսագրութիւնն ու գրականական գործունէութեան նկարագիրն այդ լեզուով գրած տալ ժողովրդի ձեռքը, մեր կարծիքով, մեզ է:

Բայց և այնպէս՝ խառնուրդ Արուսեանի աշխատասիրութիւնների այս լիակատար հրատարակութիւնը մի ուրախելի երեւոյթ է մեր գրականական կենսութեան, ուր դեռ ևս չունենք Նազարեանի, Նալբանդեանի, Մաքսիմի, Արմենու գրականների լիակատար հրատարակութիւններ: Ահա բարձր գործելու մի գեղեցիկ ասպարէզ մեր ունեւորների համար, որոնք մտածում են իրենց հոգու փրկութեան մասին, բայց տարաբախտաբար այն չեն անում, ինչ որ հաճելի է և՛ երկրքին, և՛ մարդկանց: Սրտանց ցանկանալով տեսնել «Նալբանդ Արուսեանի երկերի» երկրորդ տպագրութիւնը՝ յոյս ունենք, որ այդ հրատարակութեան մէջ լրացված կը լինի մեր յիշած գրակի պակասը:

Ս. Գառնիկ

ԲՆԹԵՐԱՆՈՒԹԵԱՆ ՊԱՆԱՆՔԻ ԳԻՒԼՆԵՐՈՒՄ (Նամակ գաւառից)

Ինքնեցանութիւնը, որ մի-երկու տասնակ տարիներ առաջ անմատչելի բան էր համարվում, գիւղական ժողովրդի համար՝ այժմ, կարծէք, առօրեայ պահանջ է դարձել գիւղական չըջանողութեամբ: Վերջին տարիների փորձերը հաստատում են, որ այժմ գիւղական ժողովուրդը շատ անգիւր ընթացքով ճաշակը արդէն առել է: Չը նայեմք, որ գիւղական հասարակութեան միջոցները ոչ մի կերպով չեն ներում նպաստել ընթերցանութեան և առհասարակ կրթութեան գործին իրանց ժողովրդական գանդալան խառնուրդ, սակայն գիւղական որոշ դասակարգեր, համեմատաբար գրագէտ երիտասարդութիւնը,

իրանց ընթերցասիրութեան ծարաւը յազանդելու համար այլ և այլ նպատակադրման միջոցների են դիմում, թէև փոքր չափով: Որինակ, մի գրագէտ երիտասարդ կամ փոքր կամ թէ «ամա-նակ» ձեռք բերելով մի որեւէ պատմութեան դիւր, կամ մի ինչ-որ աշուղի հրատարակութիւն իր շուրջն է հաւաքում ընկերների մի խումբ և սկսում է մի քանի անգամ, յաճախ ամբողջ-րով, կարգաւ երգել և կարդացնել տալ մի-մեկին, և այնքան են կարգում այդ գիրքը, որ մինչև իսկ շատերը անգիր են անում նրա բովանդակութիւնից ամբողջ կտորներ և նախադասութիւններ:

«...Արագէտ, ասում են քեզ մօտ գրքեր կան, ինչ կը լինի մի երկու հատ տաս, տանենք կարդա՛նք, քեզ կօրհնենք» — բանի մի պատմանքներ դիմեցին մեզ այս խօսքերով:—«Որեւիցը գիտէք, որ գրքեր կան,—հարցնում ենք: «Մեր գիւղում էին ասում. իմացանք և եկանք գրքեր տանելու»:—«Ինչ գիրք է հարկաւոր ձեզ. դասագիրք, թէ պատմութեան գիրք:—«Հէնց ինչ գիրք կը լինի: Տվեցինք նրանց «Վերջնաբար» և «Հրաբուրդ», «Լաւո» և այլ ժողովրդական ընթերցանութեան գիրքեր, պատմութիւն, որ կարդալուց յետոյ ան-դիմապէս վերադարձան, որպէս զի միւս անգամ ուրիշ գիրք տանեն: Խոստացան. առանց գրքերը և ուրախ-ուրախ գնացին դէպի հարեան գիւղը: Այս և այսպիսի շատ փաստեր կարող են համոզել, որ առհասարակ մեր գիւղական ժողովուրդը, զգալով գրագիտութեան բարեբար հետեւանքները՝ այժմ սիրով հետևում է գրագիտութեան և ընթերցանութեան գործին, չը նայելով որ շատ հանգամանքներ խոչընդոտ են հանդիսանում ժողովրդական այդպիսի ձգտումներին...»

Գ. Ս.

ՆԱՄԱԿ ԱՐԱՒԱՐԱՔԻՑ

Մայիսի 25-ին

Մայիսի 24-ին մեր քաղաքում ծառայող վրացիները իրանց լեզուով մի ներկայացում տուին հայոց բեմի վրա. բաւական հասարակութիւն կար ծառայող դասակարգից, վրացի գիւղացի-ներից և քաղաքի այլերից, որոնք թէև վրացերէն չը գիտէին բայց յարգանք ցոյց տալու համար՝ սիրով եկել էին ներկայացմանը: Բաւական մուտք եղաւ, որ, ինչպէս ասում են՝ պիտի յատկացնիլ արտականների դպրոցին:—Վարդե-հիւսէ շատ սարկաշուկ կը հնչէր հայոց բեմի վրա՝ եթէ վրացի թատերասէրները, որոնց մէջ մի երկու ինտելիգենտ երիտասարդներ էլ կային, այնքան քաղաքավարութիւն ունենային, որ իրանց աչքի գերանը թողած՝ ուրիշ աչքի չէնէր չը տեսնէին, պակասութիւններ էլ փաթաթէին հայի շինքին և բեմ չհանէին Արաբաբաբուն, հէնց հայ հասարակութիւնն առաջ... Ներքի վրացիները այնպիսի պիւս չունեն, որտեղ բացասական ուղղութեամբ գործող անձինք հայ չը լինէին. դոնէ Արաբաբաբուն հայերին չէին վիրաւորի: Չարմանալի մարդիկ են. կարծէք Վրաստանը Արկաղի է, ուր տիրում է անմեղութիւնը, և վրացիները՝ կրթութեան անկարօտ, երկնային, կատարելալ կանխք են, որ մեր պակասութիւնները բեմ հանելով՝ պիտի քաղաքակրթին մեզ: Չէ որ մենք այդ պարտքը կատարող մի համեստ գրականութիւն և բեմ ունենք. աւելի լաւ չէ, պարմանք, ձեր ժողովուրդի կենքը պատկերացնէ իր լաւ ու վատ կողմերով: Ձեզ դրացի ժողովուրդն մի վրաւորէք և որո՞ւմ մի ցանք մեր գաւառի վրացի գիւղացիների մէջ, որոնք այնքան սիրով և համերաշխ են իրանց դրացի հայ գիւղացիների հետ: Եւ ցաւալին այն է, որ այդ բանը առաքելութիւն է համարվում շատ երիտասարդների կողմից: Ինչ կարելի է սպասել դրանցից՝ երբ նոյն իսկ Մերեթիկները բռնել են այդ սխալ ընթացքը:

Ջ. Տ. Գ.

ՆԱՄԱԿ ԽՄԲԱԳՐՈՒԹԵԱՆ

Թիֆլիս, մայիսի 27-ին
«Մշակը» կրկին անգամ նոր ոյժով զարթի-ցրեց քաղաքական հարցը, լուսաբանելով նրան ըստ իր նոր կողմից: Հարցը հրապարակ բե-րեց պ. Մարտինով, խորհուրդ չը տալով մի ինտելիգենտ երիտասարդի՝ հոգևորականութեան ասպարէզ մտնելու: Մտնող լինելով մեր հոգե-ւորականութեանը, բարձր խաւերից մինչև ստո-րինը՝ պարտականութիւն ենք համարում մի քա-նի խօսք ասելու այդ առիթով:
«Մշակ» միջոցով պ. Մարտինովի տուած խորհուրդը, ճիշդ է, անպակասելի էր, բայց հա-կանալի—Մեր ամբողջ հոգևորականութիւնը ներկայումս այնքան ընկած, մինչև անգամ ստո-րացած է, որպէս երբեք էլ եղել մեր պատմու-թեան ընթացքում: Իսկ դրա հակադրութիւնը ժողովր-դի պահանջները ընդգայելել, մեծացնել են, և նոյն այդ ժողովուրդը, շատ անգամ փորձերից յետոյ, իրան առաջնորդող ոյժներ իրանից ցած

կանգնած տեսնելով՝ ըստ իր յայտարարութեան, կորեց, և այժմ սկսել է արհամարհանքով նայել հոգևոր դասակարգին, որի հետեւեցը պէտք է համարել այնպիսի խորհուրդներ, որպիսին տուեց պ. Մարտինով: Բայց միթէ այդ արդարացի և նպատակադրման է: Ահա հարցը: Պ. Լ. Սար-գիսեան «Մշակ» մէջ ձեռք նկատեց, թէ հոգևորա-կանութիւնը այնպիսի դասակարգ չէ, որից այ-ժմ կարելի լինի երես դարձնել: Առանց հոգե-ւորականութեան կառավարվել չենք կարող.— երեւալային միտքը է հարկաւոր, երիտասարդին պատկեր է հարկաւոր, մեռածին՝ թողել. դեռ մի կողմ թողնենք ուրիշ շատ բաներ և այն հարցա-տուութիւնը, որ հոգևորականների ձեռքին է գործ-ւում: Հոգևորականութիւնը անհրաժեշտ է, — իսկ մի անհրաժեշտ մարմին արհամարհել, դէն գցել կամեմալ.— անարդարութիւն է: Բայց դե-րանից՝ մենք ամեն մի քաղաք պահանջում ենք, որ որքան կարելի է հասարակական գործիչներ շատ ունենանք, և այդ հասարակական գործիչ-ները լինեն կրթված, ազնիւ և լուսաւոր գաղա-փարների տէր: Ահա ձեզ հասարակական գոր-ծիչների մի ստուար խումբ, որոնց միակ, այն, միակ պարտականութիւնն է հասարակութեան համար ապրել և գործել: Ուրեմն ինչու չաշխա-տել, որ այդ գործիչները համապատասխան լի-նեն և մեր պահանջներին: Կամ միթէ հոգևորա-կանները պակաս յարմարութիւններ ունեն. ընդհակառակն, նրանց գործունէութեան ասպա-րէզը շատ ընդարձակ է.— եկեղեցական բեմը, հասարակութեան հետ ամեն քաղաքական շրջ-վելը, իրաքանչիւր տան մէջ պատահելու հետեւող ունենալու իրաւունքը և այլն,—յարմարութիւն-ներ, որ աշխարհական չունին: Բաւական է մի քանի մտքով սղանալ դէպի հակական անկիւն-ներ և երևակայել, թէ ինչ մեծամեծ օգուտներ կարող են տալ կրթված, ազնիւ և լուսաւոր մարդիկ, և չէ կարելի չը խոստովանել, որ դրա համար ամենայնաբարձր լաւ, արժանաւոր հոգե-ւորականն է: Հէնց այդ պատճառով պարտաւոր ենք հետզհետէ բարձրացնել հոգևորականութիւնը ընկած գործիչների և ոչ թէ երես դարձնել նրա-նից: Ճիշդ է, այդ դժուար է, մեծ ջանք է պա-հանջում, բայց անկարելի չէ:

Մ. Տէր-Մկրտչեան

ՆԵՐՔԻՆ ԼՈՒՐԵՐ

Մեր ժողովրդական անդրանիկ գրող Խաչա-տուր Արուսեանի մասին 50-ամեակի առիթով, «Մշակ» այսօրվայ համարը մեծ մասամբ նուիր-ված է նրա յիշատակին և գործունէութեան: Վաղվայ հոգեհանգիստը, որ պէտք է կատարվի նրա յիշատակին, Վաղը մայր եկեղեցում, հա-նապաշտաւ յարգանքը արտայայտութեամբ մէկն է: Հասարակական յարգանքի համարների ցոյց պէտք է համարել և «Արուսեան» Նազա-րեանի գրական ֆոնդը, որի հիմքը դրեց պ. Սեփարատ Կահալով, և այդ անկասկած մեծ ծա-ւալ կը տեսնայ: Մենք յոյս ունենք, որ Ներ-սիւնեան դպրոցի հոգաբարձութիւնն էլ չի մոռա-նայ դպրոցի նախկին աշակերտին յարգանքի մի նշան: Սպ. որդեգիրը կարող է ընարվել Արուսեանի ծննդավայրից, Գանաբեռ գիւղից: Ա-պա մեր հասարակութեան վրա պարտք կայ այս 50-ամեակի առիթով մի համեմատ արձան կանգնեցնել Արուսեանի պատուին,—մի հարց, որին մենք կը վերադառնանք շատ շուտով:

Մեզ հաղորդում են, որ Թիֆլիսի ոստիկանու-թիւնը արդէն ցուցակագրում է քաղաքում գտնվող թիւրքահայ գաղթականներին:

Մեր թղթակիցը մեզ հաղորդում է Ուրմիայից, որ նորերն ամպանացիները նորից յարձակում են գործել Թիւրքիայի սահմանագիծի վրա ասպարզ քրդերի չիկակ ցեղի վրա, և կողոպտել նրանց մի քանի գիւղերը:

Մենք հաղորդել էինք, որ այս ամառ պէտք է Վովկաս այցելէ պրոֆէսոր Դոկուչանկի, որ աւելի քան տասնհինգ տարի է դադարված է Ռուսաս-տանի դանադան տեղերի հողի յատկութիւնը ու-սումնասիրելու գործով: Վովկասում նա մտադիր է կարճ ժամանակ մնալ և ապա անցնել Անդը-կասպեան երկրի: Մեզ հաղորդում են, որ Վով-կասեան կառավարչապետի խորհուրդը դիտա-ւորութիւն ունի օգտվել մասնագէտ պրոֆէսորի ներկայութիւնից և խորհրդակցել նրա հետ, թէ ինչպէս պէտք է կազմակերպել Անդրկովկասի հողերի յատկութեան ուսումնասիրութիւնը: Այդ ուսումնասիրութիւնը անհրաժեշտ է գաղտնի պահ պատճառով, որ շուտով պէտք է բարեփոխ-վի հարկային սիտեմը և պէտք է տուրքը բա-ժանվի երկրի արդիւնաբերութեան աստիճանի համեմատ:

Մեզ հաղորդում են, որ Թիֆլիսի Վաղը մայր եկեղեցու միաբանութիւնը մի խելացի որոշումն է կայացրել, այն է դադարեցնել եկեղեցու մէջ, ժամերգութեան ժամանակ, գանձ անակ պատեցնել: Ցանկալի է, որ այդ նոր սովորու-

թիւնը երկար տեւ և միւս եկեղեցիները համար օրինակ լինի:

Հիշարթի, մայիսի 28-ին, արքունական թա-ւրոնում կայացաւ կոնցերտ-գիւրդարանի, մասնակցութեամբ Պետերբուրգի կայսերական թատրոնների արտիստների՝ ու.տ. Պետրոպոլի ու Պետրովսկոյի և պ.պ. Չերնովի և Լեզաւոր: Չերնով ունի բաւական դօրեղ, բայց մի քիչ չոր բարիտոն. երգում է մեծ արուեստով, բայց շատ սառը. նոյն սառնութիւնը նկատվում է և տի-կին Պետրովսկոյի երգեցողութեան մէջ, որի ձայնն էլ բացի այդ՝ աչքի ընկնողներից չէ: Տի-կին Պետրովսկոյ և պ. Լեզաւոր պարեցին սպանիա-կան «Panaderos» պարը, չարտաշ և մազուրկա: Առաջինը յայտնի բալերինա է, բայց այժմ նա արդէն բաւական տարիքով է. բայց դրանից՝ նրա պարում արտայայտվում է աւելի մեքենայ-ական ճարպիկութիւն քան տեմպերամենտ: Նը-կորդը կոնցերտը—գիւրդարանի տեղի պիտի ունենայ այսօր:

Վերջին օրերս, մահաւանդ երկերները, Թիֆ-լիսում յաճախ անձրեւ է դալիս, և այդ պատ-ճառով եղանակը քաղաքում բաւական հով է:

ՋԱՄԱԿ-ՕԴԼՈՒՑ մեզ հաղորդում են. «Ճրտերի պատճառով բուսականութիւնը ծանր է զարգա-նում: Գիւղացիները վախենում են, որ շատ քիչ խոտ ժողովին և կորցնեն հոնձի մի մասը»:

ԱՐՏԱՔԻՆ ՏԵՍՈՒԹԻՒՆ

ՆԱՄԱԿ ՇԱՀՅԱՐԻՍՏԻՑ

Ժրն էլ, մայիսի 24-ին

Այս օրերս մի բանի Ծոյ-Ֆոնցի (Ներշատիկ կանտոն) հաշակաւոր վիպասան Էմիլ-Ջուլայի յարգողներից, ուղարկել են նրան մի ոսկէ ժա-մացոյց և ուղերձ: Ուղերձի բովանդակութեամբ, ինչպէս հաղորդում են այստեղի լրագրիները, հետեւան է,—

«Թանգա գիւն տ է բ. բարեհաճեցէ մեզ պա-տիւ անել ընդունել մեր արուեստի այս փորձիկ արտադրութիւնը, իբրեւ մի թոյլ նշան այն հա-մակրութեան, որը մեզ ներշնչում է ձեր հերոս սակաւ վարմունքը: Թոյլ այս ժամացոյցը չու-տով խփէ ճշմարտութեան աստմանակ ժամա-այն ճշմարտութեան, որի բաշարի և անխնայ պաշտպանն էք հանդիսացել Ազատ երկրից բո-լոր մտքերը ձեզ հետևում են մեծ և պատաւեր կուր մէջ, իսկ բոլոր սրտերը ձեզ հետ են» (Ստորագրութիւններ)

Ջուլայի պատասխանել է, ուղղելով ոտորա-գրողներից մէկի հասցէին, հետեւեալ տողերով.

«Թանգա գիւն պարոն. բարեհաճեցէ թարգ-ման լինել իմ և Ծոյ-Ֆոնցի այն բնակիչների մէջ, որոնք ինձ ուղարկել են մի հրաշալի խորհուրդ, և յայտնել նրանց, թէ որքան է հպարտացնում ինձ այս մեծարարը: Ես անկարող եմ ընդու-նել յարգանքի որեւէ ցոյց, որից ես չը զգած-վէի, որը չը շարժէր իմ սիրտը: Ես կարծում եմ, որ այս պահանջի և գեղատուր մեքենան ցոյցանում է իր մէջ մինչև անգամ պատկերը այն ուղեղի, որը նրան յղացել է, և այն ձեռնե-րի, որոնք նրան իրադրեցնել են. ճշմարտ մե-թօղի յաղթանակն է դա: Ես միշտ մի ա-ւանձին անձնական հակումն եմ ունենցել դէպի փոքրիկ աշխարհները, դէպի նրանց անխնայ շարժումների կանոնաւորութիւնը, ուր բոլորը այնպիսի ճշգրտութեամբ և ներդաշնակութեամբ է դասաւորված: Անկարելի է, որ ինձ պատկերվի հանդերձ՝ սրանից աւելի մեծ դուրսդութիւն պատճառէին: Ահ, այն, թող այս ժամացոյցը չուտով խփէ ճշմարտութեան ժամը: Նա մի և նոյն ժամանակ կը յայտարարէ մեր վեհանձն Փրանսիայի դարձիկը, որի բարեբարութեան և արդարադատութեան ոգին չէ կարող մոռնել: Բարեհաճեցէ, թանգապիւր բարեկամ, իմ կողմից շնորհակալութիւն յայտնել ձեր հայրենակիցնե-րին, որոնք կամեցել են յանձնել իմ ցոյց տա-լիանց սէրը դէպի արդարադատութիւնը, և ա-սել նրանց՝ որ ես նրանց եղբայրաբար գրկում եմ: Էմիլ Ջուլայ:

Յ. Իւրաքանց

ՆԱՄԱԿ ԲՈՂԳԱՐԻՍՏԻՑ

Ռուս ճուր, մայիսի 12-ին

Յայտնի է թէ քաղաքն մի ժամ հեռու իլա-նով կը բարց վառօդաբան 1897 յուլիս 25-ին պայթեցաւ, որուն դո՛ւ գնացին 150-էն աւելի դորժաւորներ, դորժաւորութիւնը և աղքատ ու-սանդներ, որոնք գացած էին արձակ երկու ա-միսները աշխատելու և մի քիչ դրամ ձեռք բե-րելով՝ յաջորդ տարեշրջանի դպրոցական պի-տոյքները հոգալու: Ձոներուն ընտանիքները մի-

այսպէս ի վնասով եղբայրդ զէմ դատ կը բանան և դրամական հատուցում կը պահանջեն: Ուստի ընդհանրական նախադատ ատենանք, ապրիլ 13-ի դատավարութեան յետոյ, ի վնասով եղբայր-ներէն՝ Նիկողան երեք ամսական, Թոմորը՝ մէկ ամսական բանտարկութեան և երկուքը՝ 5,000 ֆրանկի տուգանքի դատապարտեց. նաև որոշեց, որ ի վնասով եղբայրները 62,000 ֆրանկ, իբր հատուցում, բաշխեն զոնքու ընտանեաց, դատարանի միջոցաւ:

Ներտառարդաց ընթերցարանի վարչութեան ինքն ընտրուած անդամները կը շարունակեն իրենց պաշտօնավարութիւնը, հակառակ ընթերցարանի 30 անդամներ ընտրապարտութեամբ զրկված կրկնակի բողոքագիրներուն, որով կը պահանջեն ընդգիծել ընդհանուր ժողով ղուեմարել և օրինաւոր ընտրութիւն կատարել: Հասարակութիւնը պահած է ընթերցարանէն, կամ իր վարիչներէն, և ալ չի տեսնիր ժողովրդեան այն մեծ բազմութիւնը, որ կը խռնվէր ընթերցարան կարդալու համար: Մեր ժողովրդեան պակաս մէկ կողմն ալ հող է: Օրինակ, եկեղեցւոյ մէկ պաշտօնէին անվայել ընթացքը կը տեսնէ, և եկեղեցի չերթար, փոխանակ անպիտանին ընթացքը փոխել աշխատելու: Բայց ամեն պարագայի մէջ ով կը տուէ՝ ի նարկէ ինքը: Արեւայ թէ ինքն ինքն իր պարտնեքը այնչափ զոհողութիւններով հաստատված և բաւական յառաջացած ընթերցարան մը մէկ թափով կուզեն տալալը: Մեզք է, մեղք. դպրոցէ ետքը՝ մեր միակ կըրթական հաստատութիւնն է ընթերցարանը, ուրկէ կօգտվին առհասարակ ամեն դասակարգի պատկանող անհատներ: Եւ այդպիսի կարեւոր հաստատութիւն մը կործանել ջանալը՝ անհերքելի գործ է:

ՆԱԽԱԿ ՊԱՐԱԿԱՍԱՆՆԻՑ

Սոսկ զուգ, մայիսի 10-ին Քէ Սուրբուզ գաւառում, թէ նրա շրջակայքում և թէ Ուրմի գաւառում, քրիստոնեաների (Թիւրքախոս հայեր և ասորիներ) մէջ տարածված է ձրիակերութիւն: Ժողովրդին այդպէս վատ սովորեցրել են անփորձ միսփոխարինը, որոնք ոսկին կամ արծաթը չարտել են սոխի կեղևների նման... Առաջ կը բերենք մի քանի օրինակներ... Գալիս է նոր ուսուցիչ: Ամի՛քը կարծեւ լով, թէ հաղթանք է քերէ ժողովրդին բաժանելու՝ հաւաքվում շրջապատում են նրան մի բան ստանալու յոյսով: Երբ պատասխանը լինում է բացասական՝ պատասխանում են. «այս միսփոխարինը ինչո՞ն են տալիս: Ուսուցիչը քարոզում է, որ ամեն ինչ ձրի է, և՛ դաստառութիւնը և՛ դպրոցականը բոլոր ծախսերը, նոյն իսկ աշակերտների դասական առարկաները, բայց ծնողները տալիս են այսպիսի պատասխան. «այդ բոլորը ձրի տալիս են նաև միսփոխարինը. նրանք տալիս են նաև հաղուստը. եթէ դու էլ բացի այդ բոլորից հաղուստն և ուտելիքն էլ կը տա» այն ժամանակ կուղարկենք... Ոմանք գտնում են ուսուցչի կողմից կանոնաւոր հիւրասիրութիւն, սկսում են ուտել խմելը 1 օր, 2 օր, 1 ամիս, 2 ամիս... Ուսուցիչը վերջապէս արդար զայրոյթով բողոքում է դրա դէմ. յայտնելով, թէ «դա ձրիակերութիւն է». դրան պատասխանում են. «դու տուր, մենք ուտենք, թող ձրիակերութիւն լինի: Գալիս են աշակերտները... Մտորները երբեմն-երբեմն գալիս են ներկայ լինելու դաստառութեան: Ուսուցիչը ծոյլ աշակերտների ծնողներին յայտնում է որդւոց ծուղութեան և անընդունակութեան մասին: Ուսուցչին պատասխանում են. «չնչ դաս տուր, ըսկի մի թող դուս դնան խաղան. հաց էլ տուր թող այստեղ ուտեն. այն ժամանակ լաւ կը սովորեն... Ուսուցիչը ծաղրելու համար հարցնում է. «թէ էլ տան. պատասխանում են. «բա, շատ լաւ կը լինի»: Ուսուցիչը աւելի ևս ծաղրելու համար հարցնում է. «մի՞թէ էլ տան»: Եւ ինչո՞ն կը լինի որ... վնաս չունի տալը... լինում է պատասխանը:

Պատահում է, որ զիւղացիներից մէկը իր ննջեցեալի «հողով փրկութեան համար» պատառնում է անել տալիս և ճաշ պարստատու. թէ մօտիկ և թէ հեռու գիւղերից շատերը շտապում, առանց կանչելու վազում են այնտեղ, ուր քնելիս է պատարաստված, միայն մի փոքր հաց ուտելու... Զորքնէք, բարեկեցւոր կամ դատիկ է գալիս. մերձաւորները առաջարկում են ընծաներ տալ իրանց համար: Ինչո՞ւ, ինչ հիման վրա: Պատասխանում են. «այս միսփոխարինը ինչո՞ն են անում...» և աւելացնում են. «մի քանի տարի առաջ այստեղ թանգուլիւն էր, հաց չէր կար. գլխաւոր միսփոխարինը

կաւ մի բեռ փող բերեց, բոլորը բաժանեց, իրան ճանապարհի ծախս չը մնայ. վերադառնալու համար այստեղի խանից 200 թուման պարտք վերցրեց, տեղ հասնելուց յետոյ ուղարկեց...»

Ոչինչ չունենը ասելու միսփոխարինների այն վարմունքի դէմ, երբ նրանք թանգուլիւն կամ սով եղած ժամանակ օգնութեան են հասնում քաղցած ժողովրդին և աղաւաղած նրան սովի ճանկերից. բայց մի բան, որ վատ է և չը պէտք է անել՝ այդ այն է, որ ժողովրդին կամ մի օրէն անհատի չը պէտք է վարժեցնել ձրիակերութեան, երբ նոյն ժողովուրդը կամ անհատը կարող է իր ճակատի քրտնջով սեփական աշխատանքով ձեռք բերել այն՝ ինչ որ իրան հարկաւոր է:

ԱՐՏԱՔԻՆ ԼՈՒԻՐԵՐ

—Վրենայից հեռագրում են մայիսի 23-ից, թէ չը նայելով որ մի քանի ժամանակ առաջ հերթեց Գերմանիայի ունեւորւած դիտարկութիւնը՝ Պարսից ծոցում անփայլի կայարան ձեռք բերելու մասին, այժմ «Deutsche Correspondenz» լրագիրը յայտնում է, որ Ֆիլիպպինեան կղզիների ծախելու դէպքում, Գերմանիան իր կողմից կը դրաւ մի խորշ Պարսից ծոցում:

ՄՇԱԿԻ ՀԵՌԱԳԻՐՆԵՐ

ՌՈՒՍԱՑ ԳՈՐԾԱԿԱԼՈՒԹԻՒՆՑ
ԱՄԵՐԻԿՈ-ՍՊԱՆԻԱԿԱՆ ՊԱՏԵՐԱԶՄԸ

ՄԱՐԻՒԿ, 29 մայիս: Պաշտօնական հեռագիր Մանիլայից: Վրոնքիւնը շատ ծանր է: Ազգայնական կարողացաւ երկրորդ օրի կանգնեցնել նշանակած օրը: Որովհետեւ հեռագրական և երկաթուղային յարաբերութիւնները փչացրած են, ուստի եւ կտրված են գաւառները: Կալիֆոռնիայում ապստամբեց. քաղաքների և գիւղերի վրա կրակ է բացված և նրանք զբաղված են զինատարված հրոսակներիով: Մի զորագունդ պաշտպանում է Չապուէի գիծը՝ Մանիլայի գաւառը թշնամուց դեքը պահելու համար: Սակայն եթէ թշնամին մտնէ Բալայանից և Մորօնայից՝ այդ զորագունդը կը պաշարվի ծովից ու ցամաքից: Եւ աշխատում են իրարից անջատելու թիւնը և ամեն միջոց գործ են դնում դիմադրութեան համար, բայց չեն հաւատում տեղաւոր գաղաւթորդներ: Ցողափորդորդը զօր է, և եթէ եւ անկարող լինեմ յոյս դնել երկրի աշակերտեան վրա՝ իմ ունեցած ուժերը բաւական չեն լինի դիմադրելու երկու թշնամիներին: Հեռագիրը յունիսի 3-ից (մայիսի 22-ից) է:

ԼՕՆԻՍ, 29 մայիս: Վաշինգտոնից հաղորդում են, որ ամերիկական զորաբանակը, գնեքալ Շաֆտերի հրամանատարութեամբ, ճանապարհ ընկաւ Տամպայից, զորաբանակը բաղկացած է 27,000 հոգուց: Զօքը ուրաթ կամ շարաթ պէտք է մօտենայ Մանու-Նագոյին, որից յետոյ անմիջապէս փորձ կանի ափ իջնելու:

ՄԱՐԻՒԿ, 29 մայիս: Սազաստա պահանջեց, որ, ի նկատի առնելով իրերի լուրջ դրութիւնը Ֆիլիպպինեան կղզիներում, բերվէին անմիջապէս ընդունվի և պարկամետը չը ցրվի:

Լուրերին նայելով՝ Մանիլայի բերդապահ զօքը անձնատուր եղաւ, որպէս զի ապստամբները ձեռքով չը կտորվի:

ԼՕՆԻՍ, 29 մայիս: Վաշինգտոնից հաղորդում են, որ Մանու-Նագոյի ամբողջներից մէկը վրա ծածանում է ամերիկական դրօշակը:

Խմբագիր՝ ԱԼԷԿՍԱՆԴՐ ԲԱԼԱՆԹԱՐ
Հրատարակիչ՝ ԱՆԴՐԵՅ ԱՐԲՈՒՆԻ

ՅԱՅՏԱՐԱՐՈՒԹԻՒՆՆԵՐ

ԱՆԴՐԿՈՎԿԱՍԵԱՆ ԵՐԿԱԹՈՒՂԻ

Մ ա թ դ ա տ ա թ Ն 1 գնացքը դուրս է գալիս ԱՒԴՈՒԹՅ ղէպի թիճիկի վերելքից 4 ժամին և 1 քաղէկին թիճիկի և է հասնում առաւօտեան 8 ժամ 30 քաղէկին: Դուրս է գալիս Թիճիկի ղէպի ԱՒԴՈՒՄ առաւօտեան 9 ժամ և 15 քաղէկին: Բ ա թ ու մ է հասնում Երեւան 8 ժամ և 28 քաղէկին:

Մ ա թ դ ա տ ա թ Ն 3 գնացքը դուրս է գալիս ԱՒԴՈՒԹՅ ղէպի թիճիկի վերելքից 12 ժամ 6 քաղէկին: Թիճիկի և է հասնում Երեւան 7 ժամ և 10 քաղէկին: Դուրս է գալիս Թիճիկի ղէպի ԱՒԴՈՒՄ առաւօտեան 7 ժամ 55 քաղէկին: Բ ա թ ու մ է հասնում Երեւան 8 ժամ 28 քաղէկին:

Մ ա թ դ ա տ ա թ Ն 2 գնացքը դուրս է գալիս ԱՒԴՈՒԹՅ ղէպի թիճիկի վերելքից 8 ժամ 15 քաղէկին: Թիճիկի և է հասնում Երեւան 8 ժամ 34 քաղէկին: Թիճիկի ղէպի ԱՒԴՈՒՄ առաւօտեան 9 ժամ 34 քաղէկին: Բ ա թ ու մ է հասնում Երեւան 9 ժամ 2 քաղէկին:

Մ ա թ դ ա տ ա թ Ն 4 գնացքը դուրս է գալիս ԱՒԴՈՒՄ ղէպի թիճիկի վերելքից 8 ժամ 35 քաղէկին: Թիճիկի և է հասնում առաւօտեան 8 ժամ 12 քաղէկին: Թիճիկի ղէպի ԱՒԴՈՒՄ առաւօտեան 11 ժամին: Բ ա թ ու մ է հասնում Երեւան 6 ժամին:

Վ ա ճ ա ու վ ու մ է, Մ ո ս կ վ ա յ ու մ ա ղ վ ա ծ
ՍՈՒՆԿ ՀԱՅՐԱՍՏՆԻ
Աղբային լիակատար ԵՐԿԱՐԱՆԻ առաջին հատորը, չորրորդ տպագրութեամբ, բաղկացած 402 մեծադիր երեսներից, 300-ից աւելի դրոշմաւան երգերով: Գինն է, ճանապարհածախսով, 1 ռ. 20 կօպէկ. 10 օրինակ գիրք պահանջողը ճանապարհածախս չէ վճարում: Ցանկացողները գիմում են Բ ա զ ու, «ՍՈՒՆԿ»-ի հրատարակչին սոյն հասցէով. Священнику Григорию Григоряну въ Баку. 1—5

ՎԵՐԻՆ-ԱՂԴԱՆԻ դպրոցի վարչութիւնը սրանով յայտնում է իր շնորհակալութիւնը Տաճատ ք. Մարաղեանցին, Սմբատ և Գրիգոր սարկաւազներին, Յ. Սառիկեանին, Ա. Մեղրեանին, Ս. Դաւթեանցին, Վ. Անանեանցին և համեստաբար իրանց անունը մեղ չը յայտնող անձանց, որոնք կարգաւով «Մշակ» մէջ մեր գրադարանի համար հրաւերը՝ ուղարկել են 71 հատ գիրք, որոնցից 66 հատ ընթերցելի 26 ռ. արժողութեամբ, 5 հատ դասական 2 ռ. արժող., 12 դիւմին մատրոններ 4 ռ. 50 կ. և 65 հատ տետրակ 2 ռ. 14 կ. արժող., գումարաւ 33 ռ. 64 կ.: 1—1

Մ Ի Վ Ա Ր Ժ Ո Ւ Հ Ի
Ցանկանում է ունենալ տնային դասեր՝ բոլոր առարկաներից: Հասցէ՝ Թիֆլիս, Սէյդ-Աբաղեան փողոց, № 17, Մարիամ Այվազեանի: 3—4

ՎՐԱՍՏԱՆԻ ԵՒ ԻՄԵՐԵԹԻ ՀԱՅՈՑ ԿՈՆՍՏԱՆՈՒՍԻ ԱՏԵՆՈՒՄ յունիսի մէկին ԱՃԻՌՈՎ արվում է վարձու Թիֆլիսի Մոնոու հայոց եկեղեցու դաւթում գտնված երկյարեայ տունը, առանց կրկնաճրգի, մասնաւոր դրպրոց, տպարան, գրաւաճառանոց, դիւանատուն, ընթերցարան, լուսանկարարան, արհեստանոց օրիորդաց կար ու ձեկ (կրոյկա) և այլ այսպիսի հաստատութիւններ զետեղելու, բայց ոչ բնաւ ընտանեկի բնակութեան համար: Անդամ կոնստանտինայի՝ Գրիգոր ա. քահանայ Տէր-Բարսեղեանից 2—3

ԹԻՖԼԻՍԻ ԱՐԲՈՒՆԱԿԱՆ ԹԱՏՐՈՆ
== Շաբաթ, մայիսի 30-ին, ==
Կ Օ Ն Ց Ե Ր Տ - Գ Ի Վ Ե Ր Տ Ի Ս Մ Ե Ն Տ
ԿԱՑՈՒՄԱԿԱՆ ԹԱՏՐՈՆՆԵՐԻ ԱՐՏԻՍՏՆԵՐ
Բարիտոն **Ռ. Ե. ԳԵՐՄԱՆՈՎ**, բալետի սոյստուհի **Մ. Մ. ՊԵՏԻՊԵՏԻ**
Երգչուհի **Ս. Պ. ՊԵՐԵՍՍՆԵՍՈՎԱՅԻ** և բալետի արտիստ **Ս. Գ. ԼԵԳԵՏԻ**
Սկիզբը 8 1/2 ժամին:
Տաճակները, օպերային դերերով, վաղորդ ծախվում են **Բ. Մ. ՄԻՐԻՄԱՆԵԱՆԻ** երաժշտական դէպոյում, Դօրօգովայս փողոց, իսկ կօնցերաի օրը, երեկոյեան 6 ժամից, թատրոնի կասսայում:
2—2

BATEAUX A VAPEUR FRANCAIS N. PAQUET ET C^{ie}
ՖՐԱՆՍԻԱԿԱՆ ՆԱՎԱԴԱՅՈՒԹԵԱՆ ԸՆԿԵՐՈՒԹԻՒՆ
Ն. ՊԱԿԵ ԵՒ ԸՆԿ.
Կանոնաւոր և ուղղակի նաւագնացութիւն ՄԱՐՍԷԼԻՑ ԲԱԹՈՒՄ, չորեքշաբթի օրերը, երկու շաբաթ մի անգամ, սկսած յունիսի 25/6-ի չորեքշաբթից:
Եւ հակառակը՝ Բաթումից Մարսել, մտնելով Տրապիզոն, Սաւսոն և Պոլիս: Մեկնում է Բաթումից՝ չորեքշաբթի, 10/22 յունիսի ՄԻՆԳՐԷԼԻ չորեքշաբթի, նաւապետ **ՇԷԼՏ**: Եւ այսպէս շաբաթական, երկու շաբաթ մի անգամ, չորեքշաբթի օրերը, ժամը 4-ին ճաշից յետոյ:
Բաթումից Պարսից ուղղակի հաղորդակցութեան տոմսակներ տրվում են սովորականից պակաս գինով:
Աղբանդների և ճանապարհորդների մասին հարկաւոր տեղեկութիւններ ստանալու համար թող բարեհաճեն դիմել ընկերութեան գործակալներին՝ **ԲԱԹՈՒՄԻՄ**—պ. Վիկտոր Գլորիոն, Նաբեբեմայա: ԹիֆլիսԻՄԻՄ—պ. Օ. Գ. Բարեկեցւորանեանին, Սիօնի փող. Նախին Սթրուսու քարվանսարա: ԲԱԹՈՒՄ—պ. Ս. Դիլդարեանին, Կօրեքեան-կիւնայա հրապարակ: ՆՈՎՈՐՈՍԻՅԱՎ—պ. Մեկիսի Զերենբուրգերին: (Ե. Տ. Ն.) 13—20

ՆԻԿՈՂԱՅՈՍ ԱՐԲԱՆԱՄԵԱՆ
Հեղինակ «Ձեռնարկի առևտրական և գործարանական հաշուապահ հոսթեան»
ՌԻՍՈՒՑԱՆՈՒՄ ԵՒ ԵՒ ՊԱՏՐԱՍՏՈՒՄ
Երկու սեռի անձանց, 4 ամսվայ ընթացքում հաշուապահութիւն գործնականապէս, երաշխաւորելու, և եղած դէպքերում յանձն է առնում պաշտօնի առաջարկել:
ՊԱՐԱՊՈՒՄՈՒՄԻ ԱՌԱՐԿԱՆԵՐՆԵՐ
Ա) Կրկնակի խաղական հաշուապահութիւն ըստ ամենայն առևտրական ձեւերի, հանդերձ նախապիսի արդիւնաբերական և կերտիսի գործարանական հաշուապահութեան:
Բ) Առևտրական թուաբանութիւն:
Գ) Առևտրական նամակագրութիւն:
Դ) Կեղադրութիւն և ամենալաւ տնտեսական ուղղութիւն:
Պարագմունքները սկսվելու են սեպտեմբերի 15-ից, ճաշից յետոյ և պարբերաբար շաբաթանակվում են իւրաքանչիւր 20ՐՄ ամից յետոյ. իսկ կիրակի օրերը լինելու են առանձին գործնական պարագմունքներ:
Ցանկացողները թող դիմեն դատար կամ անձամբ 3 ժամից մինչև 5 ժամ երեկոյեան, Ս Օ Լ Օ Լ Ս Կ, Սերգիեւիկայա փողոց, տուն Լիսիցեանի, № 20:
Վերջիկեայ հաշուապահութեան ձեռնարկը ծախվում է ԹԻՖԼԻՍԻՄ, Իրդեկեկի դրաւաճառանոցում և հեղինակի մօտ, և Ռուսաստանի բոլոր յայտնի գրաւաճառանոցներում: ԳԻՆՆ է 3 ռ. 50 կօպէկ: Օտարաբարաղբայնից գիրքը գնելու համար կարող են դիմել հեղինակին, առանց պօստի ծախս վճարելու:
(Ն.) 2—15